ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

Դասընթացավար՝ Տաթևիկ Ստեփանյան
Վանաձորի Ե. Չարենցի անվ. թիվ 12 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Դասի թեմա- ՀՀ պետական տոները

Դասարան-
V

Նպատակը

- Ձևավորել հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, կենցաղը, ավանդապատումները, ծեսերն ու տոները նկարագրելու և վերլուծելու կարողություն:
- Սերմանել հոգատար վերաբերմունք ու վարքագիծ ազգային հոգևոր և նյութական մշակույթների նկատմամբ:
- Ձևավորել անհրաժեշտ տեղեկույթի որոնման և աղբյուրների տարբերակման հմտություն:

Վերջնարդյունքներ

- Մեկնաբանի Հայկական լեռնաշխարհի բնակիչների ավանդույթները, տոներն ու ծեսերը:
- Ներկայացնի Սուրբ Ծննդի և Սուրբ Սարգսի տոների նախապատմությունը, նշելու ժամանակն ու կարգը:
- Համացանցից գտնի թեմայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, տարբերակի նյութի հաղորդման վստահելի աղբյուրները:

Դասի ընթացքը

Քայլ 1.

Դասի սկզբում, որպես աշակերտների ուշադրության կենտրոնացման «խայծ», կիրառել «Առեղծվածների արկղիկ» հնարը.

Հարց- ի՞նչ եք կարծում, թեմայի հետ կապված ի՞նչ իր կա իմ արկղիկում (կամ պայուսակում):

Աշակերտները լարում են երևակայությունն ու փորձում կռահել:

Իմ պարագայում դա Մարտի 8-ին նվիրված բացիկ է և ՀՀ Սահմանադրության փոքրիկ օրինակը, դրոշ, զինանշանի նկար, զինվորականի նկար և այլն

Հարցը- Ի՞նչ առնչություն ունեն ցուցադրված իրերը դասի թեմայի հետ:

Դասի ընթացքը

Քայլ 2.

-Ի՞նչ տոներ գիտեք / ուսուցիչը գրատախտակին գրում է սովորողների հնչեցրած բոլոր պատասխանները: Բացատրում է որն է համարվում պետական տոն և սովորողների հետ խմբավորում են ՀՀ պետական տոները:

-Նկարագրեք, թե ինչպես ենք նշում այդ տոները

Դասի ընթացքը

Քայլ 3.

Ուսուցչուհին դասարանի ուշադրությունը հրավիրում է համացանցից աշակերտների մշակած տեղեկատվության հավաստիության վրա: Ներկայացնում է **«մեդիագրագիտություն»** հասկացության էությունն ու թվային աշխարհում տեղեկատվության ստուգման 4 պարզ քայլերը.



Դասի ընթացքը

Քայլ 4.

Սովորողները բաժանվում են խմբերի, ընտրում մեկական պետական տոն և օգտվելով համացանցից ստեղծում են տեղեկատվական պաստառ:

Քայլ 5.

Ներկայացվում են կատարված աշխատանքները, ծավալվում է քննարկում, յուր. խմբի կատարած աշխատանքը գնահատվում է ըստ ձևի և բովանդակության՝ ձևավորող գնահատման հետևյալ սանդղակով.

Տնային առաջադրանք

Պատրաստել շնորհավորական բացիկներ ՀՀ պետական տոների վերաբերյալ

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/